Արձանագրություն N 7
ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07 սեպտեմբերի 2023թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը (ԳԱՊ),
Հանձնաժողովի անդամներ Ա. Սիմոնյանը, Է. Մխիթարյանը, Ս. Ալեքսանյանը և Լ. Գալֆայանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը:

Մասնակից ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար հոսքաչափերի ձեռքբերման ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Արտախ» ՍՊԸ-ն, «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ն և «Լոկատոր» ՓԲԸ-ն՝ սահմանված ժամկետում ներկայացրել են գնահատող հանձնաժողովի 04.09.2023թ. թիվ 6 որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերով մասնակիցներ «Արտախ» ՍՊԸ-ն, «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ն և «Լոկատոր» ՓԲԸ-ն շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Մասնակից «ՀԻԴՐՈ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ տեղեկացրել է, որ էլեկտրոնային ստորագրությունը վավեր է, սակայն տեսանելիության բացակայությունը միգուցե կապած է ծրագրային ապահովման հետ, և առաջարկվող հոսքաչափերի օրիգինալ լեզվով տեխնիկական անձնագրերի թարգմանությունը իրականացվել է թարգմանական ծառայություններ իրականացնող կազմակերպության կողմից և տեխնիկապես հնարավոր չէ մեկօրյա ժամանակահատվածում այդ աշխատանքը հանձնարարել այլ կազմակերպության:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով հրավերի 8.10 կետը ընթացակարգի մասնակից «ՀԻԴՐՈ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի 1-7 չափաբաժինների հայտը մերժել,
2. ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 7-րդ չափաբաժինների ընտրված մասնակից հայտարարել «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին, 2-րդ չափաբաժնի ընտրված մասնակից հայտարարել «Պարագիծ» ՍՊԸ-ին:
3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի 1-7 չափաբաժինների համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին և «Պարագիծ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Ս. Ասրյան
անդամներ	_____	Ա. Սիմոնյան
	_____	Է. Մխիթարյան
	_____	Ս. Ալեքսանյան
	_____	Լ. Գալֆայան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան